# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍԵԱՆ ՕՂԻԻ գործարանի պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ ՇԱՈՒՐ յայտնում է, որ 1880 թ. յուլիսի 15-ին սկսեցին ծախուել ամենալաւ մաքրված ՕՂԻՆԵՐ հետեւեալ անուններով. ՍԵՂԱՆԻ, ԲՐԻՆՋԻ և ԲՈՒԼՄԵՐԻՆԳ: Շիշը ամանով արժէ 45 կ., առանց ամանի 38 կ., կէս շիշը 25 կ., առանց ամանի 20 կ., ամեն այլ տեսակ օղիներ առանձին ցուցակ ունեն: Մեծ քանակութեամբ առնողներին նշանաւոր զիջումն է արվում: Օղիները պատրաստված են ամենալաւ հացի ՍՊԻՐՏԻՑ շոգիի մաքրելու օգնութեամբ և իրան յատկութեամբ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ամենալաւ գործարանների մէջ պատրաստվածներից վատ չեն: Պ. պ. գնողների ուշադրութիւնը դարձնում ենք առաջարկած նիւթի վրա, որի արժանաւորութեան համար գործարանը պատասխանատու է: Օղիների պահեստը գտնվում է Միքայելեան կամուրջի վրա, Յենաքալնայա հիւրանոցի տակ, Լիխատինսկու տանը, Վօրօնցօվի արձանի դիմացը:

2—8 (2 շաբ.)

Այս օգոստոսի 20-ից Օրբէլ Օրբէլեանցի և Կարապետ Բէլախեանցի մասնաւոր ուսումնարանում կը սկսուի նորեկ աշակերտների ընդունելութիւն: Ուսումնարանը պահպանում է գիշերօթիկ և ընդունում կիսաթօշակ աշակերտներ, պատրաստելով նրանց Տփխիսու բոլոր միջնակարգ դպրոցների առաջին և երկրորդ դասատանց համար:

5—6

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՒԼԱԲԱՐԻ Ս. ՄԱՐԻԱՄԵԱՆ օրիորդաց դպրոցի վարչութիւնը պատիւ ունի յայտնել յարգոյ հասարակութեան, որ աշակերտուհիների ընդունելը սկսելով օգոստոսի 20-ից, շարունակելու է մինչև Սեպտեմբերի 10-ը, որից յետոյ սկսելու է կանոնաւոր ուսումն: Անցեալ տարի դպրոցը ունէր երկու դասատուն, առաջիկայ տարին կունենայ երեք դասատուն:

2—3

ՅՈՎՍԷՓ ԱԼԷՔՍԱՆԴՐԵԱՆ ՄԵԼԻՔ-ԲԷԳԼԱՐԵԱՆԻ ՄԱՍՆԱՒՈՐ ՌԷԱԼԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ (Թիֆլիս, Սադօվայա փողոց, տուն Տուտունօվի, № 34) յայտնում է, որ լրացուցիչ և ընդունողական քննութիւնները կը սկսվին օգոստոսի 25-ին, իսկ ուսումը սեպտեմբերի 2-ին:

3—4

Ներսիսեան Հայոց Ազգային Հոգևոր դպրոցում՝ Հոգաբարձական խորհրդարանի մէջ, Օգոստոս ամսոյ 27-ին, երեկոյեան 7 ժամին, կը լինի աճուրդ (առանց կրկնաճուրդի) կապալով տալու նոյն դպրոցի կալուածքը (ընծայած հանգուցեալ Յարութիւն Օքօյեանցից), որ գտնվում է Կուր գետի հեղեղատի (սադի) վրա ընդ № 46: Պայմանաթուղթը կարելի է կարդալ Հոգաբարձութեան դիւանատան մէջ ամեն օր, բացի կիրակէից և տօներից առաւօտեան 10-ց. ց12 ժամը:

Դուրս եկան մամուլի տակից և վաճառվում են Կենտրոնական և Զ. Գրիգորեանցի գրախանութներում Ս. Մանդինեանի հետևեալ դասագրքեր.

| | |
|---|---|
| 1. Ազգային Ընտանեկան աշխարհք և Այբբենարան (ա. տարուայ ուսմունք և ընթերցմունք) | 25 կ. |
| 2. Նոյնը ուսուցիչների համար բացատրութիւններով հանդերձ) | 75 կ. |
| 3. Ազգային Դիւցազնական աշխարհ (բ. տարուայ ուսմունք և ընթերցմունք) | 30 կ. |
| 4. Նահապետական և Հայրենի աշխարհ (գ. տարուայ ուսմունք և ընթերցմունք) (բ. տպագրութիւն)! | 65 կ. |

Գայեանեան և Ներսէսեան դպրոցների ուսուցիչ պ. Վարձելեանը իր գերդաստանի մէջ ընդունում է միայն ՉՈՐՍ գիշերօթիկ աշակերտուհիներ: Դիմել ուղղակի «Մշակի» խմբագրութեանը:

5—5

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ, որ գիտէ հաշուապահութիւն, կամենում է տեղ ունենալ, կարող է և ԳՈՐԾԱԿԱՏԱՐԻ կամ ԿԱՆՏՈՐՇՉԻԿԻ պաշտոն կատարել. հասցէն թողնել «Մշակի» խմբագրատանը:

5—5

Ներկայ տարուայ սեպտեմբերի 15-ին Թիֆլիսի նահանգական պալատում (Օկրուժնոյի Սուդում, լինելու է տորգ (աճուրդ) հանգուցեալ Արկադեայ Գամազովի հողերը ծախելու համար, որոնք գտնվում են Բորչալուի Սարաչլու գիւղում, Նուլաէքի մօտ: Մանրամասնութիւնը կարելի է կարդալ «Кавказъ» լրագրի № 186 Տէրութեան յայտարարութեան մասնում:

Թիֆլիսից հեռանալու պատճառով ծախվում է 225 րուբլով վարագոյրներ շինելու մի ՄԵՔԵՆԱՅ: Ծախողը յանձն է առնում նրա գործադրութեան մասին սովորեցնել առնողին:

Դիմել Յովսէփ ՄԱՍԿԵՐՊԱՑԻՆ, Մուխրանսկի փողոց, Սօլդատսկի բազարի անկիւն Գամբարօվի տանը, № 8.

5—5

## ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գավրօնսկի կանանց հիւանդ. Գօրալեվիչ ներքին հ., Ռօտինեանց կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շտեմրօսկի վեներական և կաշու հ., Բարայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկևիչ խիրուրգիական հ., Վզօրօվ վեներական և բոգաղի հ., Բէյլս աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլեադօվ, Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ և Բուգվօվսկի ներքին հ., Շտէյմրօսկի վեներական և կաշու հ., Աստուածատուրօվ կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վզօրօվ վեներական և բողաղի հ., Ռօտինեանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրօնսկի կանանց հ., Մինկևիչ խիրուրգիական հ., Կրասնօգլեադօվ և Լիսիցեվ ներքին հ., Բախուտօվ մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտէյմրօսկի և Աստվածատուրօվ վեներական և կաշու հ., Բարայեվ ջղային և ներքին հ.:

Շաբաթ Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Բարօվ կուրծքի հ., Եանկօվսկի վեներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վզօրօվ բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բարաև չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլէկտրիական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիեվսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Ատամնաբոյժ Օրբելի աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

Հայոց պատմութիւնը նախկին աղբիւրներից ուսումնասիրելու համար կարևոր մի գիրք է «Հիւսուածք բանից Նախնի պատմագրաց Հայոց» 3 հատոր, աշխատու. Կ. Կոստանեանցի:

Ա. հատորը բովանդակում է Արշակունեաց թագաւորութեան անկման և Վարդանանց ու Վահանեանց պատերազմների մանրամասն պատմութիւնը ժամանակակից պատմիչների խօսքերով հիւսած գրաբար:

Բ. հատորը բովանդակում է նոյն պատմութիւնը աշխարհաբար, որ ա. հատորի ճիշտ թարգմանութիւնն է.

Գ. հատորը բովանդակում է ա. և բ. հատորների համար կարևոր ծանօթութիւններ, ժամանակագրական աղիւսակներ և յաւելուածներ:

Վաճառվում է երեք հատորը միասին—3 ր.
ա. և բ. հատորը միասին—2 ր. 25 կ.,
բ. և գ. հատորը միասին 2 ր. 25 կ.,

Ազգային դպրոցների համար 10 օրինակից աւել առնողին 10% զիջումն կը դրուի. գնելու համար դիմել—Ալէքսանդրապօլ—Յովսէփ աւագ քահանայ Կոստանեանցին.

Տփխիս—Կենտրոնական գրավաճառանոց:
Մոսկվա—Հայոց եկեղեցու երեցփոխան պ. Մելքոն Փանեանցին:

3—10

**«ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ»** պատկերազարդ հանդիսի ներկայ ամի երկրորդ տետրը հրատարակուեցաւ և ուղարկուեցաւ պատուելի բաժանորդաց: Այս տետրիս մէջ տպագրուեցան տասն ազգային պատկեր, յորոց ութն՝ նկարուած և փորագրուած են յատուկ մեր հանդիսի համար: Ազգային պատկերաց ցուցակն այս է. Օրմանեան վարդապետ, Այվազեան աբբ եպիսկոպոս, Միքայէլ Միանսարեանց, Նուբար-Փաշա, Կարին քաղաք, Պետերբուրգայ Հայոց եկեղեցին, Արձարան Հայոց 'ի Կարին, Սովեալ Հայ ընտանիք 'ի Վան, Վան քաղաք, Կազմ Հայերէն աւետարանին, նուիրեալ Նորին Կայսերական Մեծութեան 'ի Կաթուղիկոսէն ամենայն Հայոց:

Ներկայ ամի բաժանորդութիւնն վերջացած լինելով ցանկացողքն ստանալ կամ գնել «Փարոս Հայաստանի» հանդէսն վճարում են այսուհետև իւրաքանչիւր տետրի համար 1 ր. 50 կ.:

Տփխիսում ստանալ կարելի է պ. Զ. Գրիգորեանցի և Կենդրոնական գրավաճառանոցներում:

Հրատարակիչ Զարմայր Մ. Մսերեանց:

Մի քանի **ԵՐԿՐԱՉԱՓՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ** իր վրա է առնում 1) ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ նախագծերի և ԾԱԽՍԵՐԻ քանակութեան կազմելը ինչպէս ԹԻՖԼԻՍՈՒՄ, նոյնպէս և նրա մօտ շրջականներում, 2) աշխատանքների վրա ՀՍԿԵԼԸ, 3) խորհուրդներ է տալիս ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ վերաբերութեամբ: ԿԱՄԵՆՆԴԻԱՏՍԿԱՅԱ փողոց. № 35 ՎԵՐԻՆ յարկ աջ կողմը: ԱՆՁՆԱԿԱՆ խօսակցութիւնների համար ընդունելութիւնը լինում է իւրաքանչիւր օր երեկոյեան 5—8 ժամը:

2—3

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

ԵՒ

ՏԱՐՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Օգոստոսի 20-ից սկսվեցան քննութիւնները և նորեկների ընդունելութիւնը տղայոց և օրիորդաց 4—15 տարեկան հասակը:

ՏԱՐՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ ԲԱՑՈՒԵԼ Է ՊԱՆՍԻՕՆ ՈՒՐ ԿԸՆԴՈՒՆՎԵՆ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ԿԻՍԱԳԻՇԵՐՕԹԻԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ: Вельяминов· ул. д. Аматуни.

Բ. Միրիմանեանց

Յուլիսի 1-ից ՎԱՐՇԱՎՍԿԱՅԱ ՊԵԿԱՐՆԻԱՅԻՆ կից կը բացվեն ՍԵՆԵԱԿՆԵՐ, որտեղ կարելի կը լինի ստանալ ԿԱՖԷ, ՇՕԿՕԼԱԴ ԹԷՅ և պատրաստված հանքային զանազան ՋՐԵՐ:

38—40

Մի հայ գերդաստան, որը բնակվում է Մայկոպում, հրաւիրում է հայ օրիորդ—իմացող Հայերէն, Ռուսերէն և Գաղղիերէն լեզուներ, նոյնպէս և երաժշտութիւն, տնական ուսուցչուհու տեղը ընդունել, 600 րուբլի տարեկան ռոճիկով: Ճանապարհի ծախսը առնում է Գերդաստանը իւր վրա: Ցանկացողները՝ իրանց պայմաններով՝ կարողեն դիմել նամակով Въ Майкопъ, Куб. обл. Николаю Іосифовичу Алихановъ

2—10

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ ստացվել է մեծ քանակութեամբ ԹԷՅ ուղղակի թէյագործներից, նոյնպէս ՑԻՏՐԱԴ ՄԱԳՆԵԶԻԱ ծարաւութեան դէմ և կարբօլեան ՓՕՇԻ և ՀԵՂՈՒԿ տարափոխիկ հիւանդութիւնների դէմ:

7—10

ԹԻՖԼԻՍԻ ՊՐՕԳԻՄՆԱԶԻԱ ՎԵՐՋԱՑՐԱԾ հայոց ծխական և մասնաւոր ուսումնարաններում 8 ՏԱՐԻ դասախօսութիւն արած մի ԵՐԻՏԱՍԱՐԴ ներկայ սեպտեմբերի 1-ից ցանկանում է ՈՒՍՈՒՑՉԻ ՊԱՇՏՕՆ ստանալ բացառապէս ՌՈՒՍԱՑ լեզուից և ԹՈՒԱԲԱՆՈՒԹԵՆԻՑ, ինչպէս Թիֆլիսում, նոյնպէս և գաւառներում: Տեղեկանալ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ կամ Էնֆիանջեանցի ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՆԵՐՈՒՄ:

19—22

ՁՄԵՌԸ ՍԻՐԵԼԻ Է

Գլիցերինի իւղ կաշին փափկացնող և երեսը թարմացնող: Կարելի է գտնել Ստեպան Մանվելօվի խանութում, Գոլովինսկի պրոսպեկտ, տուն Մզիրեանի:

1—3

Թեմական վերատեսուչ Գ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ յայտնում է, որ նա այժմ բնակվում է Կուկի, Սիմօնօվսկայա փողոց, տուն Սարգիս Ալէքսանեանի № 16:

1—4

Дозволено Цензурою 27 Августа 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելեանի Типографія А. А. Михельсона